



ԲԱՐՈՅԵԿԱԼՆ, ՌԻՍՈՒՄՆԵԿԱԼՆ, ԱՐՈՒԽՍՏԳԻՏԵԿԱԼՆ

ԺԱ. ՅԱՐԻ 1897

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 դր.:
Ջնդանկայ՝ 6 ֆր. ոսկի — 2 դր. 50 ֆ.:
Մեկ թիւ կ'արժէ 1 ֆր. — 50 կոպ.:

Թիի 7, ՅՈՒԻՍ

Ո Ր Մ Ո Ր Մ Ն Ե Շ Ե Ն

Ս Ա Յ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՓՈՒՍՑՈՒ ՔԻՆՈՒՄԱՐՆԵՐ ԵՐ ԻՐ ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐԳԵՐՈՂ

(Հ—բ—ս—կ—դ—ն—)

Բ.



նցնելով Արշակի թագաւորութեան պատմութեանը, մենք նախ եւ առաջ պէտք է խօսենք խորհրդացու ժամանակագրութեան մասին: Խորհրդացին (Գ, Ժ) Արշակին Տիրանիտի թագաւորել տարով, (Գ, 1է) ասում է, որ նա «թագաւորեաց ամս երեսուն», ուրեմն 365—395 թիւը. որովհետեւ, ինչպէս տեսանք, ըստ խորհրդացու՝ Տիրանի թագաւորում էր 354—365 թիւը: Արշակի որդուն եւ յորդորդին Պապին, խորհրդացին (Գ, 1Գ) թագաւորեցնում է

Թէոդոս Գեորգի ձեռքով եւ (Գ, 1Ժ) նորան տալիս է 7ամայ թագաւորութիւն, ուրեմն ըստ խորհրդացու՝ Պապը թագաւորել է 395—402 թուականը:

Կաթողիկոսների համար էլ խորհրդացին տալիս է հետեւեալ ժամանակագրութիւնը: Եռօսիկին յաջորդում է Փառնեքոսը՝ «ի տասներորդի ամի Տիրանայ, որ կալաւ զթառն ամս չորս» (խոր. Գ, Ժգ), ուրեմն 364—368: Ըստ խորհրդացու՝ Փառնեքոսի անմիջապէս յաջորդեց Ներսէս Գեորգի «յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ» (խոր. Գ, Ի) եւ կաթողիկոսեց 34 տարի (խոր. Գ, 1Ը), ուրեմն 368—402 թիւը: Նկատենք, որ խորհրդացու այս ժամանակագրութիւնը կազմած է գիտակցաբար եւ ազատ է ներքին հակասութիւններից. օրինակ՝ (խոր. Գ, ԻԺ) պատմում է, որ Արշակ Վաղնիտիանոս կայսեր մահուան ժամանակ (+17 Նոյեմբ. 375) դեռ թագաւորում էր, (Գ, 1Գ) նա Ներսէս Գեորգին եւ Պապին ժամանակակից է նշանակում Թէոդոս Գեորգին (379—395):¹

Այժմ գաւթը լինել թէ էլ լինելու հարցին: Արդ մենք արդէն տեսանք («Հանդէս» 1897, մարտ, եր. 85) որ Արշակ թագաւորի ամուսնութիւնը Ողիմպիադայի հետ՝ եղաւ 360 թուա-

¹ Բայց ի հարկէ խորհրդացին ինքն իրան հակասում է, Պապին թագաւորեցնելով մինչեւ 402 թիւը եւ մինչեւ ժամանակ (Գ, 1Գ) սպանել տալով. Թէոդոս Գեորգի հրաւիրում: Այս հակասութեան պատճառը բարեպաշտական է, ինչպէս պէտք է տեսնելը:

կանին, իսկ Յովիանոսի կուած կորանաց զաշինքը՝ 363 թուականին: Որովհետև թէ Գալատոս (Գ, իա) եւ թէ Ամփանոս (XXV, 7, 12) անմիջապէս կորանաց զաշինքին կցում են Հայպարական պատերազմի պատմութիւնը, ուրեմն 363 թուականը մի եւ նոյն ժամանակ եւ այդ պատերազմի սկիզբն է: Այս պատերազմը ըստ Ամփանոսի անկասկածելի վկայութեան (XXVII, 12, 1—3) տեւեց մինչեւ 367 թուականի վերջը կամ 368 թուականի սկիզբը,¹ երբ տեղի ունեցաւ Արշակ թագաւորի անձնատուր լինելը, ուրեմն 367 կամ 368 թուականը միեւնոյն ժամանակ եւ Արշակի թագաւորութեան վերջին տարին է: Արշակի գերութիւնաց յետոյ տեղի է ունենում Արտաշատի պաշարումն եւ առումն (XXVII, 12, 5—12), որ տեւում է 368 Հոկտ.—369 Դեկտեմբը:² Արշակի որդին Պապը Հռոմայեցաց օգնութեամբ գաշը բարձրանում նոյն այս 369 թուականին, եւ 374 թուականին սպանուում է Վաղէս կայսեր հրամանով ըստ անկասկածելի ընդարձակ վկայութեան Ամփանոսի (XXX, 1): Եւ որովհետեւ Ղերսէս Մեծը թէ ըստ Փաւստոսի եւ թէ ըստ Խորենացու թուանորոնեցաւ Պապի հրամանով, ուրեմն Ղերսէս Մեծը ապրած է՝ աւելի երկար քան մինչեւ 374 թուականը:

Այս բոլոր ըստ Ամփանոսի: Փաւստոս Բիւզանդացին իւր ժամանակագրական սխալ տեղեկութիւններով հանգեւոյձ, ըստ ժամանա-

1 Marquart, Untersuchungen zur Geschichte von Iran, p. 221.

2 Marquart, ibid.

3 Այդ ժամանակագրական մտրութիւններն են՝ Ղերսէսը Վաղէս կայսեր (364—378) ժոռ պաշարումներով, Խորենացի պատերազմում է (Փաւստ. Գ, ի, ե) եւ 9 տարի քարտի մէջ մնալով (Գ, շ), Վաղէս կայսեր մահէջ յետոյ վերադառնում է Հայաստան (Գ, ժդ): Հայ պարսկական պատերազմը, որը, ինչպէս վերեւ առեալք, տեւեց 364—367/68 թուականը, ըստ Փաւստոսի՝ տեւում է 30 տարի (Գ, ի, ծա. ծդ) կամ նոյն իսկ 34 տարի (Գ, ծ), որ ի հարկի տաւ է Վերջական, ինչպէս յիշած ենք, Փաւստոսը պատմում է (Գ, իա), թէ Վաղէս կայսրը Արշակին թագաւորեցնելու համար Պարսից Ղերսէս թագաւորի (293—302) հետ պատերազմ է մղում, որը նոյնպէս անկարելի բան է: Պ. Պաւլեանեան իւր «Փաւստոս Բիւզանդացու ուսումնասիրութեան» մէջ («Հանդէս», 1896, ապրիլ, եր. 103—105) Փաւստոսի այս մտրութիւններին առանձին շարքեր գործ գնելով աշխատում է մեծացնել եւ Փաւստոսի պատմութիւնը ձիւնաղելի դարձնել: Դա Ղերսէսի եւ Վաղէսի ժամանակակիցութիւնը կատարեալ իրաւոր առում եւ հակադրական համարելով, միեւնոյն ժամանակ առում է. «Արշակի թագաւորութեան ժամանակը, ըստ Փ. ի, որովհէջ Վաղէս ժամանակն է, եւ ենթադրեց նորան թագաւորած Վաղէսի թէ՛կուղ առաջին տարում», 364ին, թե ինչու. պ. Մալխասեան Փաւստոսի վերջինէալ տեղեկութիւնը առաւ համարելով, միեւնոյն ժամանակ այդ սխ. վերջոյ

կայրութեան եւս համաձայնութում է Ամփանոսի հետ: Այսպէսնա (Ե, լբ) պատմելով Պապի սպանութիւնը՝ չէ առում, թէ Պապը Յունաց որ կայսեր հրամանով սպանուեցաւ, բայց միեւնոյն ժամանակ նորա պատմութիւնն այնպիսի նմանութիւններ ունի Ամփանոսի պատմութեան հետ, որ ոչ ոք կսկսած չէ կարող լինել, որ Փաւստոս եւս Պապին սպանածն է համարում 374 թուին, ինչպէս Արշակի ամուսնութիւնը Ողիմպիադայի հետ 360ին, եւ կորանաց զաշինքը 363 թուականին:

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Խորենացու շնորո ժամանակագրութիւնը, ըստ որում Արշակի թագաւորած պէտք է լինի մինչեւ 395 թիւը, Պապն եւ Ղերսէս Մեծը ապրած պէտք է լինին մինչեւ 402 թիւը եւայլն, սխալ եւ հակապատմական է: Մեզ մնում է բացատրել,

հիմունելով, Արշակի թագաւորածն է համարում 364 թուականին, մնում է ընթերցողի համար անհասկանալի: Այսպէս պ. Մալխասեան «Ըստ Փաւստոսի, Արշակի թագաւորած համարելով 364 թուականին (մի բան, որ Փաւստոսն ամենեւեւ չէ առում), այլ Խորենացին է, ըստ որոյ ժամանակագրութեան՝ Արշակը դաւ է բարձրանում 364 կամ 365ին), այս թուականի հիման վերայ զանազան եզրակացութիւններ է հանում Փաւստոսի պատմութիւնը, որովք ընթերցողը ուշքով Փաւստոսի պատմութիւնը ձիւնաղել է: Կարծես ըստ 364 թուականի, զորով թագաւորութեան սկիզբը նա առհամարում է 343ին: («Աւելի կանխիկ, առում է պ. Մ. զանէ չէ կարելի, տես Մարգարա, Untersuchungen etc. p. 219, որովք հեղինակը շատ յարգելի խորհրդածութեամբ ձերական զաշակալութիւնն եղած է համարում 339ին): Եւ այս թուականի վերայ հիմունելով՝ Մեհհրուստ Երեմիու, Հաւասպի որդու մասնակցութիւնը Հայկական—պարսկական պատերազմում՝ անկարելի է համարում: Դուրս է բերում, որ «Ըստ Փաւստոսի, Պապի մեռելը եղած է ոչ առաջ քան 379 թուականին եւայլն: Պ. Մալխասեանի այս խորհրդածութիւնները Փաւստոսի մասին փրկողաման են: Այսպէս նա գուր բերելով, որ «Ըստ Փաւստոսի՝ Պապը 379ին առաջ մեռած չէ կարող լինել, անտես է սնում՝ նոյն Փաւստոսի պատմութեան որ այլ գրութիւն (Ե, լբ), ըստ որում Պապը սպանուեց 374ին: Ուրեմն պ. Մալք. անկարելի դեպքում, իմէ ցանկանաւ անտաւա գտնուել, ըստ ըստ միայն իրաւունք ունէր եզրակացնելու, որ Փաւստոսի պատմութեան մէջ Պապի մեռելին եւ մահուն նկատմամբ Հայաստ. թիւն կայ, եւ ոչ Փաւստոսի պատմութիւնը ձիւնաղելի դարձնել, Հենց չենազատի կողմն էլ այն է, որ այս տեսակ դեպքում ըստ փրկողամանի կերպով աշխատ պատմականը Հայկական մասին, ուղիղը տակ դանաւանել, այն ինչ որ ուղիղ է ընդունել, իսկ այն ինչ որ սուտ է մերժել, եւ ոչ թէ „Das Kind mit dem Bade ausschütten“, ինչպէս այս տեսակ դեպքերում առում է գերմանացին: Այս եղանակով հակադրուող համար ըստ միտութիւններ կը պարզւին: Այսպէս Փաւստոսի յիշած 34 կամ 30 ամալը Հայկական—պարսկական պատերազմը հասկանալի է դառնում, իմէ այդ ժամանակամիջոցը հայտնեց Հռոմէական պարսկական պատերազմի սկիզբի միջին: Արշակ թագաւորի գերութիւնը, ինչպէս այդ արած է Մարգարա (Untersuchungen etc. p. 220),

թէ ինչից ստիպուած խորենացին մի այսպիսի սխալ ժամանակագրութիւն եւ հնարում. եւ այս մենք կ'անենք, խոսելով խորենացու պատմութեան առանձին գլուխների մասին:

Այն ինչ որ խորենացին (Գ, Ժը) պատմում է Արշակի գահ բարձրանալու մասին, ամենեւին չէ միաբանուում փաւստոսի պատմութեան հետ (Գ, Իա—Գ, Բ): Փաւստոս (Գ, Ի) պատմելով Տիրանի գերութիւնն եւ կուրացութիւնը Ատրպատականի վերականգնւ Շապուհ Վարադի ձեռքով, (Գ, Իա) պատմում է, թէ ինչպէս Հայ ազգի բոլոր գառակարգերը վերժինդրութեամբ լցուելով, Անդովկ Սիւնուս եւ Արշաւիր կամաւորականին խնդրագրով եւ ընծանելով Յունաց թագաւորի մօտ են ուղարկում, «գե ի նա ձեռս տուեալ ծառայեցեն նմա հնազանդութեամբ, եւ լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝ խնդրել վերժս ի թշնամեաց նոցա», Վաղէս (?!) կայսրը սիրով ընդունելով Հայոց պատգամաւորներին, Բասեն գաւառի Ոսիս գիւղի մօտ յաղթելով Պարսից Ներսէս (?!) թագաւորին, ստիպում է նորան, Հայոց վերայ թագաւորեցնելու: Արշակին, որն իւր հօր հետ միասին գերի էր գնացած Պարսկաստան: Իսկ խորենացին, ինչպէս ցոյց տուինք («Հանդէս», 1897 մայիս, եր. 143), յայտնիպատակով Հայոց այս պատգամաւորութիւնն առ Յունաց կայսր եւն այլընդայլոյ խորով կոտակի մահաց յետոյ, Տիրանի գահակալութեան ժամանակ պատմելով, այստեղ ստիպուած է միայն տեսլ. «Հապուհ թագաւորեցցոյ փոխանակ Տիրանայ զորքի նորա վարչակն, առանց Յունաց կայսրի միջամտութիւնը յիշելու: Բայց միեւնոյն ժամանակ խորենացին չէ զանում իւր այս կեղծիքը պատճառաւորաւ: Խորենացու Տամանա Շապուհը «սակնեմով ի զօրացն Հայոց, զի մի աստիան ինչ առաջի արկելոյ իւրոց գործոցն ինչիցն. այսպիսի իմն պատեհ համարեալ, բարեբարութիւն առնելով՝ իւր հաստատել զաշխարհ», Այս պատճառաւորութիւնն անհիմն է. Հապուհը, որ չանխածեց Հայոց զօրքերից, Տիրանին գերելով եւ կուրացելով, այժմ չէր կարող նոյն զօրքից անխածելով Հայոց վերայ թագաւորեցնել Արշակին: Փաւստոսի պատճառաւորութիւնը միակ ուղիղն է. Հապուհը կոտակից կայսր զենքից անխածելով՝ Արշակին թագաւորեցնում է: Իսկ մեր կեղծ պատմաբանի խօսքերը, թէ Շապուհը «զհետ երթեալ յունական զօրացն, եւ հասեալ ի Բիւթանիա, նստեալ ամիսս յովմսն եւայլն, միանգամայն սուտ եւ հակապատմական

են. որովհետեւ բազմիցս յիշուած 25ամեայ (338—363) պատերազմի ժամանակ այսպիսի բան պատահած չէ: Վաղինակ Սիւնին, որին Շապուհը ըստ խորենացու Վահան Ամատունու փոխանակ սպարապետ է կարգում արեւելեան զօրքին եւ յանձնարարում Հայաստանը, յիշուում է Փաւստոսի մօտ (Գ, Ժ) իբրեւ զօրապետ: Խորենացու այս կեղծիքը մի մութ անխարկութիւն է Փաւստոսի պատմութեան վերայ (Գ, Բ), ուր ասած է. «հայոց արքայն (Արշակ) զվասակ (Մամիկոնեան) զմիջին եղբայրն զիւր գայեանին ի սպարապետութիւն զօրավարութեան յիւս պատերազմացն...»: Որ խորենացին Մամիկոնեան տան քաղերի գործերը սիրով լռութեանն է մատնում, այդ մէջ մինչեւ այժմ եւս տեսնել ենք: Ահա խոր. (Գ, Ժը-Ի) գաղտնիքը:

Հետեւեալ գլխում (Գ, ԺԺ) պատմում է Վաղենտինոսի թագաւորելը, Պարսիկներին հալածելը, նորա թուղթն առ Արշակ, Արշակի անպատասխան թողնելը Հռոմայեցոց կայսր թուղթը եւ այս անխոհեմութեան հետեւանքը: Արդ պէտք է տեսլ, որ այս ամբողջ գլուխը մեր պատմաբանի ինքնահնար գիւտերից մինն է: Նախ սուտ են միանգամայն սոյոգ պատմութեանը հակառակ է, թէ «Յունաց թագաւորեալ Վաղենտինոսն, եւ գումարտակի միջերկրեսյս առաքեալ, հալածական տանն զզօրս Պարսից», որովհետեւ հաստատապէս յայտնի է, որ Վաղենտինոսը 364 թուի գարնան իւր Վաղէս եղբոր հետ Բաժանելով հռոմեական լայնածաւալ կայսրութիւնը, այնուհետեւ (365—375) ինքն իշխում էր արեւմտեան երկրների վերայ, եւ Պարսիկների դէմ երբեք պատերազմ մղած չէ: Վաղէս կայսրն եւս, որ իշխում էր Արեւելքում (364—378), ոչ միայն այդ ժամանակները Պարսիկներին հայածական չէ արել, այլ եւ կուրանաց գաղիները յետոյ մինչեւ 368 թուականը լռութիւն պահպանելով, այս թուականին էլ միայն մեծ զլուշութեամբ օգնեց Պապին թագաւորեցնելու, որպէս զի 363ին կրած գաղիներին խախտող չհանդիսանայ:¹ Երկրորդ նամակի բռնականութիւնը բոլորովին հակառակ է այս ժամանակուայ (364—368) պատմութեանը: Հռոմայեցոց կայսրը, որի նախորդը ստորութեամբ

¹ Առ ժամանակ (Հայոց ինքզան) օգնութիւնը մղեցելով, Տիրանուս զօրավարի միջոցաւ Պապան (Պապը) Հայաստան արաքեցաւ, որը մի քանի ժամանակ պէտք է իշխեր առանց արքայական պատմուրջ Հայ ազգի վերայ: Այս պապին կոտարեցաւ. այն ուղիւ խորհրդածութեանը, որպէս զի մեծ չղապարարութիւնը իբրեւ խախտող խորհրդածութեան զաշխարհը (Ammian Marc. XXVII, 1240):

363ին իւր դաշնակից Արշակի Հայոց թագաւորին բարձի թող էր արել, չէր կարող այժմ վերջինիս հետեւեալ խօսքերը գրել. «Պարտ էր քեզ յիշել... զերախտին» որ ի մենջ ի վաղնջուց մինչեւ ցքեզ, եւ հետեւեալ ի նոցանէ եւ մօտել մեզ, որպէս զի խառնեալ ընդ զօրս մեր մարտիցան ընդ նոսա, Արդ Արշակի թագաւորը այդ ժամանակ ոչ միայն հեռացած էր Պարսիկներէից, այլ եւ նոցա հետ, կեանքի եւ մահուան պատերազմ էր մղում, եւ Յունաց կողմից ոչ թէ երախտեաց, այլ մեծ ապերախտութեան էր հանգիստ: Խորենացին միանգամայն անտեղեկ լինելով այն ժամանակուայ պատմութեանը, այս տեսակ անյայտող կեղծիք է հնարում: Պատմութեան հակառակ են նաեւ կայսեր հետեւեալ խօսքերը. «Աւաքեսցես զհարկս աշխարհիդ, եւ առեալ զեղբարս քո, եւ որ ընդ նոսա վտարանդիքի՝ ի բաց անցին», որովհետեւ ինչպէս տեսանք («Հանդէս», 1897, մայիս եր. 142), Հայոց թագաւորութիւնը այդ ժամանակ հարկատու չէր Հռոմայեցւոց կայսրութեանը, իսկ պատանդներն ոչ միայն արդէն վաղուց Կ.Պոլսից վերադարձած էին, այլ եւ գնէին եւ Տիրիք Արշակի հրամանով վաղուց արդէն սպանուած էին:

Այս բոլորից յետոյ մեզ մնում է միայն բացատրել, թէ ինչ բանի հիման վերայ մեր պատմաբանը մի այսպիսի կեղծիք է հնարում: Արդ խորենացու այս ամբողջ գլուխն ոչ այլ ինչ է, եթէ ոչ այլ ընդհանուր հայտեացք Արշակի թագաւորի քաղաքականութեան վերայ, ի հարկէ մի հայեացք խորենացու տեսակէտից: Խորենացին փաստաւոր պատմութիւնից դիտեր, որ Արշակ թագաւորը Ներսէս Մեծի աքսորման համար Յունաց կայսեր հետ գտաւորով, նորա սահմաններն աւերել էր (Դ, Ժա), որ Արշակը Շապուհի բարեկամական հրաւիրին հետեւելով, գնացել էր Տիրզքն եւ նորան երգուել էր հաւատարմի մնալու, բայց յետոյ իւր երգմանը դրժել եւ փախել էր (Դ, Ժգ), որ Արշակը, չնայելով սորան, այնու ամենայնիւ միացել էր Շապուհի հետ եւ Մեծքնի մօտ Յունաց կայսեր զօրքերը քարոզել էր, բայց դարձեալ Շապուհի կամեմանով, նորա դաշնագրութիւնն արհամարհել եւ Հայաստան էր փախել (Դ, ի):

Մենք առ այժմ մի կողմ ենք թողնում այն հարցը, թէ փաստաւոր պատմութեան այս գլուխներն ինչ պատմական արժէք ունեն: Անտարանքն է միայն, որ խորենացին այս բոլորը կարգաւոր, այն եզրակացութեանն է եկել, որ

Արշակ թագաւորը չէ հետեւել մի որոշ քաղաքականութեան, այլ միշտ տատանուել է Պարսից եւ Յունաց արքունեաց մէջ, երբեմն մէկի, երբեմն միւսի կողմը բռնելով: Խորենացին Արշակի այս անհաստատամտութիւնը (իւր կարծիքով) պարսրակում է շատ իրիտ խօսքերով. «Իսկ Արշակ, առում է նա, եւ ոչ պատասխանի առնէ [վաղնջտիտանո կայսեր կարծեացեալ] թղթին. այլ նշկահեալ արհամարհեաց զնոսա, նաեւ ոչ զհետ Շապուհոյ միտեցաւ ամենայն սրտիւ. այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս եւ յերգս վարձակաց. քաջ եւ արի երեւեալ քան զՎերդիւս, իսկ արդեանքը Թերսիտեսի նմանեալ կարի կորուզիլով¹ վտարանդեալ յիւրոց նախագլխոցն, մինչեւ զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս»:

Բայց արդեօք արդարացի՞ կերպով մեր պատմաբանն Արշակի գլխին այս տեսակ հայեացքներն է թափում: Արդ, ով որ ծանօթ է այն դարու պատմութեանը, նորա համար դժուար չի լինիլ հասկանալ, թէ Հայոց թագաւորն ինչ դժուար գրութեան մէջ էր գտնուում, եւ կարճ էր նա Հռոմայեցւոց հետ դաշնակցելով, Պարսից բարեկամութիւնն արհամարհել: Ըմենէին ոչ: Հայոց թագաւորի այսպիսի քաղաքականութիւնը կարող էր երբեմն Հայաստանի համար կորստարեւ հետեւանքներ ունենալ, Սորա համար կենդանի օրինակ կարող է լինիլ Յուլիանոս կայսեր ժամանակը, երբ Արշակը ստիպուած բացարձակապէս անցաւ Հռոմայեցւոց կողմն եւ պատերազմեց Շապուհի դէմ (տես «Հանդէս», 1897, մարտ եր. 85): Թէ ինչ հետեւանքներ ունեցաւ Հայոց թագաւորի այս վճռական քաղաքականութիւնը, այդ ցոյց տուեց 363ի դաշինքն եւ հայ-պարսկական պատերազմը: Ռեբեմն Հայաստանի անբարեկամ շախարհագրական դիրքն աչքի առաջ ունենալով, կարելի է ասել, որ Արշակը պէտք է շատ մեծ զգուշութեամբ վերաբերուէր գէպ ի Պարսից արքունեաց պահանջները, Հռոմայեցւոց կայսրը, որ երբեմն նոյն իսկ անկարող էր գտնուում իւր սահմաններն արբայից արբայի յարձակումներից պաշտպանել, չէր կարող երաշխաւորել, որ Հայաստանը չի աւերուի Պարսիկներից: Այս բանը հասկանալով Արշակ թագաւորը, ոչ միայն աշխտեալ է Շապուհի հետ բարեկամութիւն պահպանել, այլ եւ, ինչպէս երեւում է,

¹ Արեւմտի եւ Թերսիտեսի նմանութիւնը խորենացին վերցրել է կեդ-կաթմթեէնի պատմութիւնից («Հանդէս» 1891, ապրիլ, եր. 104):

քաջ դիտելով հոռմէական-պարսկական պատերազմի ընթացքը, երբեմն պատրաստականութիւն է ցոյց տուել Պարսից հետ միանալու: Այս բոլորից յետոյ կարծում ենք, որ մեր պատմաբանը բոլորովին ի զուր է գատապարտում Արշակին:

Հետեւեալ գլխում (Գ, 1) խորենացին պատմում է Ներսէս Մեծի եւ իւր բարեկարգութեանց մասին, որը փաւստոսի սքանչելի պատմութեան (Գ, գ—գ) համառոտութիւնն է: Ըաղիտա, Եպիփան եւ Գինտ անապատակեաց վանականները խորենացին վերցրել է փաւստոսից (Ե, 16—17) եւ Զ, 14), իսկ որ նորա Սիւլուսեաց ազգից էին եւ Եփրեմ անունով մի ընկերակից եւս ունէին, այդ մի աղատ յաւելուած է խորենացու կողմից: Ըստ փաւստոսի Ըաղիտան ասորի, իսկ Եպիփանը յոյն էր ազգով: խորենացին ինչպէս փաւստոսի եւ միւսներէ նշնպէս էլ Ներսիսի եպիսկոպոս ձեռնադրուիլը Նեսարիայում ծածկում է, եւ մենք գորա մասին յետոյ պետք է խօսինք:

Հետեւեալ գլխում (Գ, 16) պատմում է Վաղենտինոս կայսեր ահաւորութիւնը, Գնէլ մանկան հօր սպանութիւնը, Թէոդոսի ծանր զօրով Հայաստան գալը, Ներսէս կաթողիկոսի ընդառաջելն, Գ. Պղիս գնալն, Վաղենտինոսից եւ Վաղէսից փառաւոր ընդունելութիւն գտնելը եւ պատանդներով ու Ողիմպիադա կոյսի հետ միասին Հայաստան վերադառնալը:

Արդ այստեղ Վաղենտինոսի վերայ պատմածը խորենացին վերցրել է Մաղադասից,¹ որի պատմութիւնն սակայն անվաւերական է համարուում: Թէոդոսի «ծանր զօրքով» Հայաստան առշաւելն Արշակին պատժելու համար անմիտ «հեքիաթ» է, որ մեր պատմաբանը հնարել է, որպէս զի Ներսէս Մեծ հայրապետին միջոց տայ բարեխոսելու Թէոդոս կայսեր առաջ եւ իւր բարեխոսութեամբ ապաստելու Արշակին: Ինչպէս կարող էր Թէոդոսը 364—368 թուականին Հայոց վերայ արշաւել, քանի որ յայտնի է, որ նա մինչեւ իւր կայսր ընտրուիլը (19 յունուար 379) պատերազմ մղելով Սարմատացիների դէմ, յետոյ առանձնացել էր Սպանիայում եւ զբաղուում էր իւր անդային գործերով:²

ուրեմն Արեւելքում զօրավարութեան պաշտօն վարած է: Սուտ եւ հնարովի են մեր պատմաբանի խօսքերը, թէ Ներսէսն Ողիմպիադա օրիորդին Հայաստան բերեց եւ ամուսնացրեց Արշակի հետ: Ինչպէս մենք տեսնք, («Հանգէս» 1897, մարտ, եր. 85), այդ ամուսնութիւնը կատարուեցաւ 360 թուականին, առանց Ներսէս կաթողիկոսի միջամտութեան: Մեր պատմաբանն այս կեղծիքը հնարելով նպատակ ունի՝ այս ամուսնութեան գործն եւս վերագրել Ներսէս Մեծ հայրապետին: խորենացին իւր այս գլուխը հնարել է փաւստոսի պատմութեան վերայ (Գ, 1), ուր պատմուած է Ներսիսի պատգամաւորութիւնն առ Յունաց կայսր:

(Ըրբանդիւնի)

Յ. ԴԱՂԱՍԵՐՍՅԱՆ



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԹԻՒՆԷ.
ԵՂԻՄԵՐԵԹ ԹԻՊՈՂԱՅՈՍ ՀՈՅՈՑ
ՎԵՐԵՍԻ ՎԵՐԶՈՐԹԵՆՆ ԳՐԱԾ

(Ըրբանդիւնի—14—1)

Ինչպէս, ինչպէս տեսնք, 1718ին սահմանադրութիւնն որոշած էր, որ գործնքը կամ ամուսնութեան դաշինքն՝ որ ի սկզբան քահանայից ձեռքն էր, քաղքին դատաւորն եւ նուաւրն ընեն, ստորագրեն. բայց ետքն երբ որ քահանայից ազդեցութիւնն աւելցաւ ու զօրութիւնը շատցաւ՝ այս բանը նորէն ձեռուրէն առին, որովհետեւ որոշեալ վճարում մ'ունենալով, բնականապէս իրենց եկամուտ մը լի բերէր: Արդ՝ քաղքային իշխանութիւնն, այս գործնքը ձեռուրէն ձեռն առաւ 1765ին, ըսելով՝ նախ, թէ ասիկայ գաշինքի եւ դատաւորի վերաբերեալ բան է. երկրորդ՝ թէ չկայ աս բան քահանայից եկամտին մէջ գրուած, հետեւաբար եկեղեցականաց գործքը չէ, ուստի նորէն դատաւորին եւ նոտարին յանձնեց, Յաւելուած մ'աւ ըրաւ անոր մէջ քաղքաբարձութիւնն, այնու որ որոշեց թէ, ինչպէս այն դաշնագրութիւնը նոտարը գրելու է ըստ ինքեան, բայց ուրիշ մէն ալ կրնայ գրել: Սակայն դատաւորին պետք է որ ներկայացնեն, որպէս զի քաղքին կնիքը վրան զնէ եւ օրինաց զօրութիւն ունենայ: Ասկէ ետքը՝ գաշինքը նոտարին երկմայ. բառ առ բառ արձանագիր ըլլաւ. եւ գիւնարին մէջ

¹ «Հանգէս Ամ», 1894 Փետրուար, եր. 80: Իսկ «ի ձեռքն ունէր զարուսթիւնն», խօսքերը խորենացին բառացի կերպով ընդօրինակել է զեղծ-Վաղէսիցին: («Հանգէս», 1891, ապրիլ, եր. 104):

² Գալմիշընան, Տիեզերական Պատմ. Բ. 352: